Որակի Քաղաքականություն

«Էրեբունի» Բժշկական Կենտրոն

Կոդ՝ QM-PL-01

«Էրեբունի» բժշկական կենտրոնի բարձր ղեկավարությունը հաստատակամ է ապահովել առողջապահական խնամքի որակի շարունակական բարելավումը՝ բժշկական կենտրոնում և Հայաստանի Հանրապետության առողջապահական ոլորտում: Կենտրոնում մենք պարտավորվում ենք մատուցել բացառիկ առողջապահական ծառայություններ՝ առաջնահերթություն տալով պացիենտների անվտանգությանը, նրանց բավարարվածությանը և շարունակական բարելավմանը:

Մենք պարտավորվում ենք պահպանել որակի և անվտանգության ամենաբարձր չափանիշները՝ խթանելով անձնակազմի շարունակական վերապատրաստումը և մասնագիտական զարգացումը: Մեր մասնագետները հավատարիմ են վարակների կանխարգելման, ռիսկերի և վտանգների կառավարման, ինչպես նաև ապացուցողական բժշկության վրա հիմնված մոտեցումներին: «Էրեբունի» բժշկական կենտրոնում շուրջօրյա ռեժիմով ցուցաբերվում է անհետաձգելի բուժօգնություն՝ որակավորված մասնագետների կողմից:

Մեր քաղաքականությունը, գործընթացները և ծառայությունները նախագծված են պացիենտների անվտանգության, հարմարավետության և բարեկեցության համար՝ միաժամանակ հարգելով նրանց իրավունքները, արժանապատվությունը և անձնական տվյալների գաղտնիությունը: Բժշկական կենտրոնի բոլոր բաժանմունքներում բուժօգնությունը տրամադրվում է միևնույն մակարդակի վրա և առանց խտրականության:

«Էրեբունի» բժշկական կենտրոնը հավատարիմ է JCI կողմից մշակված Պացիենտների անվտանգության միջազգային նպատակներին.

Նպատակ 1. ճիշտ նույնականացնել պացիենտներին:
Նպատակ 2. բարելավել արդյունավետ հաղորդակցությունը:
Նպատակ 3. բարելավել բարձր զգայունության դեղորայքի անվտանգությունը:
Նպատակ 4. ապահովել անվտանգ վիրահատություն:
Նպատակ 5. նվազեցնել առողջապահության հետ կապված վարակների ռիսկը:

Մեր կառավարման համակարգը հիմնված է որակի կառավարման ISO 9001:2015 և հավատարմագրման JCI միջազգային ստանդարտների հիման վրա՝ ապահովելով ծառայությունների համապատասխանությունը համաշխարհային չափանիշներին: Գիտակցելով նաև շրջակա միջավայրի պաշտպանության կարևորությունը, «Էրեբունի» բժշկական կենտրոնը պարտավորվում է շարունակաբար նվազեցնել թափոնները, ածխածնային ուղղակի և անուղղակի արտանետումները, խթանել ջրի և էներգիայի արդյունավետ օգտագործումը՝ ներդնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարման մեխանիզմներ:

Հիմնադիր տնօրեն | *Գործադիր տնօրեն*